

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԿԵ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մեջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мекке»:

Կամ Tiflis, Rédaction «Mschak»:

Տ է լ է ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առաւօրեայից):

Յայտարարությունները ընդունվում են առանձին լիցիտով:

Յայտարարությունների համար վճարում են

խւրաքանչիւր տողաւորին 10 կոպեկ:

Տ է լ է ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բաղադրական տեսութիւն.—Ներքին ՏԵՍԻՍԻ-
թիւն. Մի քանի խօսք Ս. Մ.-ին. Առաջին
Մատուցանան. Նամակ Խմբագրութեան. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ
ՏԵՍԻՍԻԹԻՒՆ. Սերբիական զէպերի առիթով.
Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—
Հետազոտութիւն.— ՅԱՅԿԵԱՐԹԻ ՅՈՒՆԻՍԻ.—
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Գերմանիայից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍԻՍԻԹԻՒՆ

Սերբիական ներկայացուցիչները ընտրե-
ցին իրանց համար թագաւոր Պետար Կա-
րաճօրցիկովին և դրանով վերջ դրին տն-
ցողական դրութեան առաջին ամենաճանր
և ամենապատասխանատու շրջանին: Սեր-
բիայում դործող ժամանակաւոր կառավա-
րութիւնը կը սպասէ նոր պետի գալուտեան,
որին և կը յանձնէ պետական բարձր վե-
րահասութիւնը: Այնուհետեւ կը սկսվի նոր
թագաւորութեան գործունէութիւնը նոր
միտքերով և սկզբունքներով հետ միասին:
Մակեդոնիայի և Ալբանիայի շրջաննե-
րում շարունակուած են տեղի ունենալ մանր
մունք ընդհարումներ և բռնկումներ, բայց
նրանք կորցրել են այն սպառնալի բնաւո-
րութիւնը, որ ունէին գարնան սկզբին:
Բոլղարիան այլ ևս խրախուսողի և քայա-
լերողի դեր չէ կատարում մակեդոնացիների
վերաբերութեամբ և իր կողմից էլ աշխա-
տում է հանգցնել ապստամբութեան կրա-
կը, յոյս չունենալով ոչ մի արտաքին ա-
ջակցութեան վրա մակեդոնացիների օգտին:
Այժմ մնում է, ուրեմն, ապահովել թե-
ֆօրմներ իրագործումը Մակեդոնիայում և
Ալբանիայում: Ահա այդ խնդիրն է, որ
յուրջ հոգս է պատճառում թէ բոլղար-
ներին և թէ եւրոպական պետութիւնների
ներկայացուցիչներին: Արդեօք, շուտով կը
մտնովին թեֆօրմները և կարող կը լինեն
նրանք գահացնել տեղական ազգաբնակչու-
թեանը:

Բարենորոգութիւններ մտցնելը որոշ
ծախքեր կը պահանջէ, որոնք պէտք է
հոգացվեն կամ օսմանեան ընդհանուր
գանձարանից կամ տեղական միջոցներից:
Պետական գանձարանը հազիւ թէ կարո-
ղանայ դործ տեսնել: Անհրաժեշտ կը լինի,
որ տեղական տուրքերի մէջ նշանաւոր մասը
գործադրվի տեղական պէտքերի՝ օրինակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐԻՄԱՆԱՅԻՑ

Հայագիցի, յունիսի 6-ին
Հայաստանը հին դարում և ներ-
կայումս

Հնավում ընկած է Սիփանայ սարը: Գրգա-
կան սպառնալիցան ձիաւորների մի խումբ
շտապում է իր նշանակած տեղը հասնելու:
Նրանցից ոչ հեռու գնում է և մի ուրիշ ձիա-
ւոր, որ ըստ երեւոյթին օտարական ճանապար-
հոր է, կորցրել է իր ձիաւոր ընկերներին և
զգալով, որ իրան մեծ վտանգ է սպառնում,
աշխատում է խուսափել քուրդ հրոսակ ձիա-
ւորների հայեացքներից: Միայնակ ձիաւորը
կանգ է առնում և իր հայեացքներով փնտռում
կորցրած ուղեկիցներին: Յանկարծ նա նկա-
տում է, որ քուրդ ձիաւորներից մէկը արդէն
ձին արագութեամբ զէպի իրան է քշում և
հասնելով իր մօտ առնում է:

—Տէր խնդրում է ձեզ իր մօտ գնալու:
Դա թիւրքական մի քուրդ զինւոր էր, որին
միայնակ ձիաւորը էր ուղղում բոլորովին վրա-
տահանաւոր Մի քանի րօպէից յետոյ վրա հասաւ
և թիւրք օֆիցերի համազգեստով մի ուրիշ

վարչական բարեկազմութեան, հաղորդա-
կցութեան բարեւորման, զպրոցների և գա-
նազան հիմնարկութիւնների համար: Ան-
կասկած՝ փորձեր կը լինեն այդ ոգով, բայց
քանի որ պետական ծախքերը այնքան մեծ
են եղել հէնց ապստամբութեանը ճնշելու
համար, հազիւ թէ հնարաւոր լինի յառ-
կացնել բաւականաչափ առատ գումարներ
նաեւ տեղական բարեփոխութիւնների հա-
մար:

Պէտք է աչքի առաջ ունենալ Ալբա-
նիայի վերաբերութեամբ և այն հանգա-
մանը, որ այրանայիները իրանց համա-
րում են արտօնել և մի տեսակ անկախ
վիճակի մէջ և ուստի թիւրքական իշխա-
նութեան թեֆօրմների վրա նայում են,
իրեն մի այնպիսի միջոց վրա, որով սուր-
թանի կառավարութիւնը ձգտում է խախ-
տել նրանց արտօնութիւնները և ինքնա-
վարութեան հիմունքը: Այդ հանգամանքը
առաջ է բերել ալբանացիների արտերում
անվտանգութիւն զէպի թիւրքերը և կրկ-
նակի կերպով դժուարացնում է թեֆօրմ-
ների ներմուծումը: Մերձաւոր ապագան
ցոյց կը տալ, թէ եւրոպական պետու-
թիւնների և մասնաւորապէս Բոլղարիայի
ջանքերը որքան ուժեղ եղան հարկադրելու
թիւրքերին մտնելու խօստացած թեֆօրմ-
ները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻԹԻՒՆ

ՄԻ ԲԱՆԻ ԽՈՍԻՒ Ս. Մ.-ԻՆ

Երկու տարուց ի վեր Թիֆլիսում ապրում
է մի համեստ, շատ համեստ մարդ: Եւ այդ
համեստ մարդը... Սեդրակ Մանդինեանն է:

Երբ համեստ է մի մարդ, որ չէ կարող հա-
մեստ չը լինել—դա հակառակը, բայց երբ հա-
մեստ է Սեդրակ Մանդինեան—դա և զարմա-
նալի է և տարօրինակ, որովհետեւ նա երբեք
համեստ չէ եղել...
Այդ բանը, այնքան որ Ս. Մանդինեան եր-
բեք համեստ չէ եղել—կարող են վկայել այն
բոլոր մարդիկ, որոնք երբ և ինչ ծառայել են
Սեդրակ Մանդինեանին հետ, կամ որ և՛ չը-
փում, յարաբերութիւն են ունեցել նրա հետ,
կամ նոյն իսկ կարգացել են Սեդրակ Մանդի-
նեանին:

Ինչու հետեւն գնանք, ինքը Սեդրակ Ման-
դինեանը կը վկայէ, որ Սեդրակ Մանդինեանի

ձիաւոր, որ մի և նոյն խնդրով դիմեց միայ-
նակ ու մուրլով ձիաւորին: Վերջինս ստիպ-
ված էր լսել նրանց և գնալ քրդական ձիաւոր-
ների խմբի առաջնորդի մօտ: Գուրդ զինու-
որական առաջնորդը իր քրդական երկար հրա-
ցանք զննելով օտարականի ուսի վրա, ասաց.

—Դու ճանապարհդ կորցրել ես, մենք կա-
րող ենք միասին գնալ, որովհետեւ մենք էլ ենք
ուղղում ձեր որոշած տեղը գնալ:

—Դուք շատ սիրալիր էք, էֆֆէնդի, ասաց
օտարական ձիաւորը, որ սկսեց նրանց հետ
միասին գնալ:

Օֆիցերը գնում էր առջինը, օտարականը
գնում էր մէջ տեղում, իսկ քուրդ զինւորը
հետեւում էր նրանց:

—Բայց կարծես մենք իսկական ճանապար-
հով չենք գնում, որովհետեւ իմ նպատակն է
հասնել Սիփանա-դաղի ստորոտը, ասաց մի քիչ
գնալուց յետոյ օտարականը և սանձադրեց
իր ձիուն:

—Ո՛հ, մենք պէտք է այն ճանապարհով գնանք,
ասաց բարկացած և կրակոտ աչքերով քուրդ
օֆիցերը:

Այդ ժամանակ միայն իսկոյն հասկանում է
օտարականը, որ ինքն աւազակների ձեռքն
է ընկել: Անսխալտելի է օտարականի դրու-
թիւնը, նա այլ ևս չէ կարող տեղից շարժվել,
որովհետեւ այդ բանը նրան մահ կարող էր
սպառնալ: Օտարականը ուրախ և պատրաստ
էր իր ունեցածը կամովին կորոպտել տալու,

համար համեստութիւնը եղել է՝ տաննախն-
դող պատուիրան:

Եւ ահա այդ Սեդրակ Մանդինեանն այսօր
այն աստիճան համեստացել է, որ նոյն իսկ
վրդովվում է, երբ նրան տեսնում են, թէ «Տա-
րաքի» մէջ գրող Ս. Մ.-ն ոչ այլ ու է, եթէ ոչ
Սեդրակ Մանդինեանը:

Եւ ծիծաղելին այն է, որ նա կարծում է,
թէ՛ այդ գիւտն անելու համար «Մշակը» դի-
մել է արտակարգ միջոցների—խուզարկու-
թիւնների և արել, հարց ու փորձ է դիմել և
այն և այն երգովում ենք, պ. Մանդինեան,
որ դուք սխալված էք:

Ձեզ ճանաչելու համար մենք և մեզ հետ
հազարաւորները ունենք մի շատ հեշտ, տար-
րական միջոց, որը գուցէ զգաւոր է ձեզ
համար:

Ահա այդ միջոցը:

Երբ ձեզ պատահի կարգով մի գրուածք, որ
բաղկացած լինի եօթանասուն երկու պարբե-
րութիւններից, ուր ենթական ձեր քթի տակն
է, իսկ ստորագիւծը եօթ վերստ հեռու,—ի-
մացէ՛ք, որ դա հեղինակը Սեդրակ Մանդի-
նեանն է:

Մի այլ նշան:

Երբ մի գրուածքի մէջ լինեն բառեր, ածա-
կաններ, դերանուններ, մակբայեր, շաղկապ-
ներ, միջարկութիւններ և... չը լինի ոչ մի
միտք—իմացէ՛ք, որ դա ևս Սեդրակ Մանդի-
նեանն է: Թող այդ գրուածքի տակը լինի ոչ
թէ Ս. Մ., այլ նոյն իսկ Ա. Ժ. Ն. Ռ.—դա
ոչ մի նշանակութիւն չունի:

Եւ այսպիսի անզուգական լեզու և ոճ ունե-
նալուց յետոյ, պ. Մանդինեան կարծում է, որ
իրան ճանաչելու համար հարկաւոր են արտա-
կարգ միջոցներ... Իսկ եթէ նա, պ. Ս. Ման-
դինեան, ցանկանում է, որ ոչ ոք չիմանայ, թէ
Մանդինեանը Մանդինեանն է, դա համար մի
հատիկ միջոց կայ միայն—թող զրէ նա կարճ,
և զրէ մի այնպիսի բան, որի մէջ միտք լինի

—այն ժամանակ եթէ եօթանասուն պարբե-
րից միտք չկայ ինքը Ս. Մանդինեանը հաւա-
տացնելու մեղ, որ դա հեղինակը ինքը Ս.
Մանդինեանն է, ոչ ոք չի հաւատալ դրան:
Ահա ինչ կը նշանակէ ոճ. ի գուր չէ ասած
թէ՛ ոճը նոյն ինքը մարդն է:

Եւ այսպիսի լեզու ունենալուց յետոյ, պ.
Մանդինեանը վեր է կացել և հաւատացնում է
«Տարաքի» ընթերցողներին, թէ՛ «Մշակի» լե-
զուն իր համար անհասկանալի է:

Դա շատ ընտան է. ուրիշ կերպ եթէ լի-
նէր,—դա շատ ցաւալի կը լինէր «Մշակի» հա-

միայն թէ իր կեանքը մահվան վտանգից ազատ
լինէր:

—Ո՛վ ես դու և ինչ է քո անունը, հարց-
րեց վերջապէս օտարականը քուրդ օֆիցերին:
—Ես անուն չունեմ, վրա է բերում օֆի-
ցերը:

—Ո՛րտեղ ես ապրում:

—Ես տուն էլ չունեմ:

Օտարականը օֆիցերի վերջին պատասխա-
նից յետոյ աւելի է համոզվում, որ ինքն մի
անզուլ աւազակապետի հետ գործ ունի:

—Ճանաչում ես ինձ և արգիւց գիտես, որ
ես գիտնական նպատակով ձեր երկրում ճա-
նապարհորդող գերմանացի եմ, հարցնում է
օտարական ճանապարհորդը:

—Այն, ճանաչում եմ, պատասխանում է ա-
ռանց վարանելու օֆիցերը:

—Բայց այն էլ գիտես, որ ես քո փառչա-
հի—սուլթանի հովանաւորութեամբ եմ ճա-
նապարհորդում:

—Այդ էլ գիտես, պատասխանում է մի և
նոյն անտարբերութեամբ քուրդը:

Գերմանացի գիտնականը չը կարողացաւ
այդքան խօսակցութիւնից յետոյ ըմբռնել, թէ
արգիւց քուրդը կամենում է իրան միայն կո-
րոպտելով բաւականաչափ, թէ կարող է և սպա-
նել իրանը: Բայց չէ որ մի քանի տարիներ ա-
ռաջ այդ մի և նոյն քրդի հայրենակիցներն
էին սպանել և Գիւլիսի համալսարանի պրօֆե-
սոր Շուլցին՝ Հայաստանի լեռներում: Դա գեր-

մար, որովհետեւ հէնց այս րօպէին, եթէ Ման-
դինեան գովէ մի գրուածքի լեզուն և առէ,
թէ՛ լեզուն իրան հասկանալի է—դա՛ այդ հե-
ղինակի համար լեզուական մի մահ է և անպե-
րազանալի կորուստ...

Ուրեմն իզուր, իզուր է պ. Մանդինեան, իր
ասելով, օրական 5 կոպէկ տալիս «Մշակի» գը-
նում և երեքական կոպէկ էլ «Տիֆլիսկիյ
Листок»-ի համար շտապում: Դա կը նշանակէ
իզուր տեղը իր բիւրճէի վրա տարեկան 23
րուբլու մի խոշոր ծախս աւելացնել: Դա մի
շատ անհաշիւ քայլ է, որից մենք զգուշացնում
ենք պ. Մանդինեանին:

Բայց երբ է եղել պ. Մանդինեան հաշու
մարդ, թէն մի ժամանակ նա նոյն իսկ առե-
տրական մի ձեռնարկութեան մէջ մտաւ. բայց
խելք արեց, որ շուտով թողեց այդ ասպարէզը,
եթէ ոչ այդպիսի ընդունակութիւններով իր
պատրոններին երկու տարում անակութեան
գուռը կը տանէր:

Եւ երկրորդ՝ խելք «Տարաքի» ինչ անէ, որ
դուք փաթաթվել էք նրա վտիտ վզին ձեւ
գեղեցիկութիւններով, հրապարակաւ օտարական
թանէ չիջուկով...

Դա էլ լաւ բան չէ:
«Լուսնա»՝ անո՛ւ ձեզ ասպարէզ դրելու, ինչքան
կուզէք, ինչպէս կուզէք և երբ որ կուզէք:

Փորձեցէ՛ք—ձեր ալոզութեանը ես երաշխա-
ւոր եմ:

Ստորագիւտ

ԱՌԱՔԵԼ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Մայիսի 30-ին Երևանի նահանգում գտնված
իր Արզաքանից կալվածում վարձանկեց Առա-
քել Մատուրեանը:

Հանգուցեալը շնորհիւ իր կեանքում կատա-
րած մի շարք բարեգործութիւնների, իր
միշտ հոգատար վերաբերմունքի զէպի հայկա-
կան կեանքում տեղի ունեցող թշուառ զէպ-
քերը առաւելապէս հարուստներից և բարեգործ-
ներից ամենաժողովրդականն էր:

Մատուրեանի ձեռքով բարեբարված ուսա-
նողների թիւը տասնեակներով է. բաղաժախ-
վանքեր, զպրոցներ, որբանոցներ նրանց
ստացել են նուէրներ, հայ հեղինակների,
գրողների համար շատ յաճախ Առաքել-
ապերը եղել է Մեկնասա Այժմ, երբ փողը,
հարստութիւնը մի ժամանակ զգայուն սըր-
տեր դարձրել են տպաւորման, երբ որբի
առտասուքը, հիւանդ ջրաւորի անկանիւթի դրու-
թիւնը, յուսահատ այրիների հառաչն ու կոծը,

մանացի այն գիտնականն էր, որ 1828 թւին
Ֆրանսիական կառավարութեան աջակցու-
թեամբ գիտնական նպատակով ճանապարհոր-
դեց Հայաստանում իր, առաջին անգամ այն-
տեղ գտած սեպական զանազան արձանագրու-
թիւնները ժողովելու, սկիզբը դրեց հայոց
պատմութեան գիտնական ուսումնասիրու-
թեան և քրդական մի աւազակապետից դա-
ժան կերպով կողոպտուից ու սպանուից Վե-

րոյիչեալ զէպին իսկոյն և եթ յիշեց Բերլինի
երիտասարդ գիտնականը, երբ մերձակալ հո-
վիւր հասնելուց յետոյ քուրդը իր ձիուց իս-
կոյն իջաւ նա իսկոյն հասկացաւ, որ աւա-
զակապետը ամենից առաջ իրան մինչև չապի-
կը պէտք է մերկացնել տալ:

Վերջապէս սկսվեց խոդը:

—Ի՞նչ է այս, հարցրեց օֆիցերը:

—Ժամացոյց է:

—Տուր ինձ:

Գուրդն առնում է մէկը միւսի ետեքից գիտ-
նականի ժամացոյցը, հեռադիտակը, կողմա-
ցոյցը և այլն:

—Այժմ հանի մօտը եղած փողերը:

Գիտնականը առանց մի խօսք անգամ ասե-
լու յանձնում է քուրդ օֆիցերին իր մօտ ե-
ղած թիւրքական և ռուսական փողի պատկա-
ռելի գումարը:

—Միայն այսքան ես տալիս, էլ տուր, եթէ
ունիս:

—Մօտս մի գրօշ անգամ չը մնաց:

հասարակութեանն ու մի ողջ երկրին հասած արհաւիրքները փոխանակ քրտտոնեայ մարդուն ստիպելու օգնութեան ձեռք մեկնելու ներդրածին ու հարստահարվածին, ընդհակառակը դրանց ստիպում է գտնանալ երես շուտ տալ թշուառութիւնից, այժմ Առաքել Մատուռեանի նման հասարակ և բարի քրտտոնեաների գործունէութիւնը կրկնակի արժէք և գնահատութեան է արժանի:

Թող թեթեւ լինի հողը այն մարդու համար— որի արածը յիշելով, հազարաւորները կարող են սրտից ասել—հանգիստ ոտկերներդ, բարի մարդ և հայ...

Ա. Արմանասեան

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յունիսի 4-ին

«Մուրճ» ամսագրի № 5-ի մէջ տպւած է մի փոքրիկ մատենագրութիւն Մ. Պէշիկթաշեանի «Տաղերի» մասին Որովհետեւ ամսագրի մէջ բերված է գրքի ոչ-ամբողջ վերնագիրը—«Մ. Պէշիկթաշեան, Տաղեր, հեղինակի պատկերով և Լէօի առաջաբանով, Թիֆլիս, 1903, գինը 40 կօպ» և չէ յիշատակված թիւ գրքը ում հրատարակութիւնն է, կարող է ենթադրութիւն լինել, թէ այդ «Տաղերը» եւս եւս հրատարակել կամ որ և է անմիջական մասնակցութիւն ունեցել եւս այդ հրատարակութեան մէջ, ուստի և ամսագրի ցոյց տուած պակասութիւնները կարող են վերագրել ինձ: Պարտք եմ համարում յայտնել, թիւքիմացութիւնների տեղիք չը տալու համար, որ Պէշիկթաշեանի «Տաղերի» հրատարակիչն է, ինչպէս ցոյց է տուած գրքի առաջին երեսում, Հ. Ն. Ն. եւս միայն գրել եմ այդ հրատարակութեան համար առաջաբան, որի մէջ փորձել եմ բնորոշել Պէշիկթաշեանի բանաստեղծութեան էութիւնը: Բացի այս առաջաբանից, ես ոչ մի մասնակցութիւն չեմ ունեցել այդ գրքի տպագրութեան մէջ:

Լէօ

ՆԱՄԱԿ ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Եկատերինօպար, մայիսի 30-ին

Բարեկամներ, խնդրեմ, հետեւեալ երկտող գրութիւնս զետեղելու «Մշակի» համարներից մէկում:

Հանգամանքներից ստիպված պարտք եմ համարում յայտնել հրապարակով, որ «Մշակի» 1902 թ. № 262-ի մէջ, ներքին լուրերի բաժնում տպված Եկատերինօպարի լուրի հեղինակը ես չեմ:

Ուսուցչուհի՛ օր. Ն. Գրիգորեան

ՆԵՐԿԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ներկայ յունիս ամսի 15-ին մայրաքաղաքում պէտք է տեղի ունենան մի շարք խորհրդակցութիւններ այդ և գործ ու թիւ ան և գիւնեւ գործ ու թիւ ան այն խնդիրները ուսումնասիրելու և քննելու մասին, որոնք պէտք է օրէնսդրական կարգադրութիւնների հիմք ծառայեն Այդ խորհրդակցութեանը պէտք է մասնակցեն նաև ներկայացուցիչներ Կոմկոսի կողմից: Խորհրդակցութեան նիստերը կը տեւեն մօտ վեց շաբաթ:

Այդ ժամանակ սկսում են գերմանական դոկտորին մերկացնել բառին բուն նշանակութեամբ: Գուրդը բարձրացնում է իր հրացանը և մի քիչ հեռանալուց յետոյ արձակում է գիտնականի վրա Վերջինս, բարեբաղդաբար միայն վիրաւորվելով, արհամարձակ փոխում է գետնի վրա և իրան մեռած է ձևացնում: Գուրդ օֆիցերը երկրորդ անգամ է գնդակ արձակում և վերաւորում է գերմանացու թիւք, իսկ օֆիցերի ստորգրեալ գինը իր հրացանի կոթով խփում է փոլած գիտնականի կրծքին: Աւազակ ջրգրը կարծելով, որ գիտնականին արգէն սպանել են, իսկոյն և եթ անյայտանում են:

Արհեստագին գերմանացին, մահվան դէմ կռուելով, մի կերպ հանում և ճիթչկական օգնութիւն է գտնում այն քաղաքում, որտեղից նա հէնց նոյն առաւօտեան էր դուրս եկել մի քանի պահպաններով և վերջիններիս ճանապարհին կորցրել Գիտնականը բարեբաղդաբար քաղաքում բժշկվում և իմանում է, որ ինքը թուրք աւազակների ձեռքն է ընկած եղել:

Վերոյիշեալ պատմածներս կարող են չափազանցութիւն թուալ, բայց ամենին ոչ, դա զառն իրականութիւն է, որ հրապարակւոյն հաստատեց և վկայեց գերմանացի հայագէտ դոկտոր Վ. Բեքը, որ իր կաշուի վրա է կրել վերոյիշեալ արտորոտական չորհարանքները:

Դա բարոյական մի մեծ հարուած էր Բեքի մեջ և նրա նման զիպլոմատների հասցէին, որոնք գերմանական կառավարութեան իսկա-

Մեզ հաղորդում են, որ հանգուցեալ Գ. Կարա-Մուրզայի հայկական երգերի առաջին սերիան, որը իր մէջ պարունակում է հետեւեալ 10 երգերը՝ 1) «Մեր հայրենիք», 2) «Մայր Արաքս», 3) «Դու զով խնդրես», 4) «Արագածը—էջմիածին», 5) «Օյ Նազան», 6) «Լէօփո, լէ, լէ», 7) «Ջիւմ վիշն», 8) «Ջան գիւղում», 9) «Որ մահկանացուն» և 10) «Վանեցոց խրախոյս», շուտով կը յանձնվի տպագրութեան և աշխարհ լոյս կը տեսնի: Վերոյիշեալ երգերը խմբագրված են Թիֆլիսի յայտնի երաժշտագետ Լ. Ժ. Կնիսյանի ձեռքով:

Ստացանք Շեքոյ Գեղարուեստական Այբօն, հրատարակութիւն Գնունի-Մարի ֆոտոտիպիայի, որ գտնվում է Թիֆլիսում Այբօն իսկ որ արժանի է իր անուան Բաղկացած է 10 հատ միջին դիրքի ֆոտոտիպ պատկերներից, որոնք ներկայացնում են Շիրակի մի քանի հնութիւնները (Խծկօնք, Խօշուկներ և Անիի աւերակները): Այդ ֆոտոտիպ պատկերները վերին առնիճանի գեղեցիկ և նուրբ են, արդւոյն եւս մի գեղեցիկ շաղկի մէջ: Գինը համեմատաբար էժան է—1 ռ. 50 կօպէկ: Այբօնը անգղանի զարդ լինելու բոլոր յատկութիւններն ունի: Հրատարակիչները յայտնում են, որ եթէ հայ հասարակութիւնը օգնէ, նրանք պիտի շարունակեն իրանց այդ գործը: Հասարակութեան անկախութիւնը, ի հարկէ, այն կը լինի, որ նա կը գտնէ այդ գեղեցիկ հրատարակութիւնը: Մենք արժանի ենք համարում հրատարակիչներին այդպիսի անկախութեան: Պէտք է ուրախ լինել, որ մեզանում էլ սկսում են գեղեցիկ, մաքուր գեղարուեստական գործեր կատարել: Այդ ձգտումը պէտք է խրախուսել, եթէ մենք չենք կանոնում, որ միշտ միանք արուեստից ու գեղեցիկ գործերից դուրս:

Կովկասեան բարձր իշխանութիւնը որոշել է Ջիբրայէլի գաւառի բոլոր կառավարչական հիմնարկութիւնները, որոնք մինչև այժմ գետեղված էին Ջիբրայէլ աւանում, տեղափոխել Կարաբուլաղ, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ վերջինը, իբրև ապրելու համար աւելի յարմարաւոր տեղ և իբրև գաւառի կենտրոն, աւելի յարմարութիւններ է ներկայացնում գաւառական հիմնարկութիւնների կենտրոն լինելու, քան Ջիբրայէլը: Բացի սրանից որոշված է Ջիբրայէլի գաւառը անուանել կովկասեան պատերազմների հերոսներից մէկի—Կարաբաղին անունով, իսկ Կարաբուլաղը—Կարաբաղի: «НОВ. ОБОЗР.» լրագրի առելով մօտ օրերում Գանձակի նահանգական իշխանութեան կողմից կարգադրութիւն եղաւ կատար անելու այս որոշումը:

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ յունիսի 3-ին, քննելով վրաց թեմական ուսումնարանական խորհրդի միջնորդութիւնը՝ տարեկան 3500 ռուբլի յատկացնելու, որպէս նպատակ թիֆլիսի ուսումնարանների եկեղեցական-ծխական ուսումնարանների օգտին, որոշեց մեծել այդ միջնորդութիւնը՝ պատճառաբանելով իր մերժումը քաղաքային միջոցների սղութեամբ:

Կան շահերի համար աշխատում են ժամանակակից Թիւրքիայի ներքին անառիկութիւնը իրականութիւնը աղաւաղել և պայծառ գոյնելով նկարագրել, որպէս զի գերմանական հասարակական կարծիքը չը դատապարտէ նրանց զէպի մեր դարի հիւանդ մարդը տածած բիւզանդական բարեկամութեան համար: Դոկտոր Վ. Բեքը թիւրքաց կառավարութեան չնորհիւ գոյութիւն ունեցող վերոյիշեալ բարբարոսութիւններն իբրև ներածութիւն հաղորդեց իր այն հրապարակական դառախօտութեան մէջ, որ նա կարգաց սրանից մի քանի օր առաջ Բեքին ընդարձակ դահլիճներից մէկում՝ ընտրի հասարակութեան ներկայութեամբ: Նրա վերին աստիճանի հետաքրքրական դառախօտութիւնը, որին արձագանք տուին գերմանական մամուլի գրեթէ բոլոր նշանաւոր օրգանները, կրում էր «Հայաստան» հին դարում և ներկայումս վերնագիրը, որի համառօտ բովանդակութիւնն հետեւեալն էր:

Հայաստանը Ալեքանդրի երկրի բնաւորութիւն ունեցող մի բարձրաւարդակ է, հարուստ իր բարձրագագած և ձիւնապատ լեռներով, որոնց ցից ամենաբարձրն է Արարատը: Վերջին անուանում էր կոչվում հին Հայաստանը, ինչպէս վկայում է Աստուածաշունչը: Հայաստանին մի և նոյն անունն է տալիս և Նաայի մարգարէն իր՝ Սանհրիթ թագաւորի մասին հաղորդած տեղեկութեան մէջ: Հին իսկական Հայաստանը գլխաւորապէս բողոքում էր Արաքս, Տիգրիս և

Թիֆլիսի առաջին մասի հայաբնակ դատաւորը, յունիսի 3-ին քննելով Թիֆլիսի բնակիչ Իվան Օքոջովանիճի գործը, որ մեղադրվում էր կեղծած մեղր վաճառելու մէջ, դատաւորտեց մեղադրողին մի ամսվայ բանտարկութեան:

Թիֆլիսի քաղաքային լուսարդի կողմից դատաւոր գրաւակահանելով տուած գումարի քանակութիւնը այս յունիս ամսի 1-ին հաւասար էր 365,995 ռուբլու, իսկ գրաւակահանների արժէքը 477,133 ռուբլու: Յունիսի 3-ին քաղաքային վարչութեան անդամ Կոկչայեւի դումանայից նշանակված պատգամաւորների հետ միասին յանկարծեալ քննութիւն կատարեց լուսարդում և գտաւ, որ ընդունված գրաւակահաններից պակաս չէ և ոչ մէկը:

Ներկայ 1902/3 ուսման տարեշրջանում Թիֆլիսի քաղաքային արհեստագիտական դպրոցում իրանց ուսման ընթացքն աւարտեցին 40 հոգի, —16 հայ, 14 վրացի, 7 ռուս, և 3 գերմանացի: Հայերն են՝ 1. Արեան Կարապետ (Վերին ագուլութեցի), 2. Ամիրխանեան Յովհաննէս (Թիֆլիսեցի), 3. Ազեան Մարտիրոս (Թիֆլիսեցի), 4. Ամիրադեան Ալեքսանդր (Ղազար գաւառի Բաւրան գիւղացի), 5. Վարդանեան Աղաթի (Ղազարի գաւառ Սև-Քար, գիւղացի), 6. Դաւթեան Արէլ (աղախեցի), 7. Ղազարեան Յակոբ (Թիֆլիսեցի), 8. Մէլիք-Աւետիսեան Թադէոս (Երևանցի), 9. Յովհաննիսեան Միքայէլ (Թիֆլիսեցի), 10. Փեղտալիսեան Գեղամ (ալեքսանդրապոլցի), 11. Պողոսեան Պողոս (Ղալաղլուցի) 12. Տէր-Պապարեան Տիգրան (Երևանցի), 13. Սաֆարեան Յովհաննէս (նուսեցի), 14. Պալիկեան Ստեփան (Հին-Նախիվանցի), 15. Պուրուսեան Սեդրակ (Երզրուցի) և 16. Տանձակեան Գեորգ (Թիֆլիսեցի): Վերջին երկուսը աւարտեցին միմիայն արհեստից:

Լուսմ ենք, որ պ. Պողոս Կարա-Մուրզան, որ մի քանի ամիս սրանից առաջ իր հանգուցեալ եղբոր յիշատակին համերգ տուեց այստեղ և Բաքում ու մեծ աղոթական ունեցաւ, ամառս գնում է Շուշի այդտեղ միտոնների օգնութեամբ այդպիսի մի համերգ տալու նպատակով:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Անաղապար շաբաթ այստեղ միտք ծագեց կատարել Գանձակի նախկին յաջորդ Բաղդատ վարդապետ Թաւադայեանի յիշատակին հոգեհանգիստ՝ նրա մահվան տարեդարձի առիթով: Մտադրութիւն կար այդ հոգեհանգիստին տալ հասարակական դատարարիչ բնաւորութիւն, կատարել նրա հետ միասին նաև Գրիգոր Արծրունու հոգեհանգիստը, որը Գանձակում մինչև օրս չաղողվեց կատարել չնորհիւ տեղական հոգեւոր վարչութեան արդի բժիշկի: Զրազրված էր խօսել Գրիգոր Արծրունու մասին ընդանրապէս ու մասնաւորապէս նաև հանգուցեալ Բաղդատ վարդապետ Թաւադատեանի մասին, իբրև մէկի մեր այն հազուադէպ, խիստ սակաւագին արժանաւոր հոգեւորականներից, որոնք հետեւել ու հետեւում են

Եփրատ գետեւում: Եփրատի վտակներից մէկը այսօր էլ կոչվում է Մուրադ-չայ, որ մասնում է իր նախնական Պուրատ անունը: Թիւրքերի Հայաստանի մի մասը նուաճելուց յետոյ այդ վտակը կոչեցին իրանց Մուրադ մեծ սուլթանի անունով: Մուրադ-չայի Հին պատմական Հայաստանը այժմ բաժանված է երեք մասերի և ոտոգվում է ջրառատ գետերով ու լճերով, որոնք շատ են նպաստում երկրի պտղաբերութեանը: Հայաստանի կլիման ընդհանրապէս բարեյաղող է, իսկ ազգաբնակչութիւնը բաղկացած է քաղաքականապէս տիրող Թիւրքերից, արհաւան քրդերից, որոնք զանազան ցեղերի մի այլանազակ խառնուրդ են ներկայացնում և հնդկադերմահայ հայերից, որոնք սինտեմատիկաբար հալածվում ու սպառվում են քրդերից, իսկ Թիւրքաց կառավարութիւնն ոչ ընդունակութիւն և ոչ էլ կամք է ցոյց տալու քրդական բարբարոսութիւնների առաջն առնելու: Հայաստանում ապրում են և ուրիշ քրիստոնեայ ժողովուրդներ—Նեստորականներ, եսկոքիներ և ասսորայի երկրպագուներ: Վերջիններս չեն կարողանում տանել, երբ մէկը աստուայի կամ օծի մասին վատ է խօսում: Ըստ նրանց հաւատի աստուան մի ընկած հրեշտակ է միայն—Կլոպտոկի Աբաղմանան, որին Աստուած ամեն մի րօպէ կարող է ներել և կը պատժէ այն մարդկանց, որոնք նրանց վերաբերմամբ վատ են խօսել: Թիւրքերն ու քրդերը Հայաստանի պատմութեան գրեթէ

մեր անմահ ուսուցիչ, Գրիգոր Արծրունու, քարոզած քաղաքականութիւնը Հանգուցեալ Բաղդատ վարդապետը պաշտում էր Արծրունուն, մինչև օսկրի ծուծը տոգորված էր նրա մտքերով: Բնական էր այդ պատճառով մեծ ուսուցչի ու նրա արժանաւոր վեղարակիր աշակերտի հոգեհանգիստը կատարել մի տեղ ու խօսել նրանց մասին: Մեր մտադրութիւնը չի քաղաքովեց: Կիրակի օրը, պատարագի վերջում, շատ անշուք կերպով կատարվեց հոգեհանգիստեան կարգ, բայց ում համար, այդ անկապող եղանք իմանալ, եկեղեցու աւագը, յաջորդը, վերջի աղօթքում ոչ մի անուն չը յիշեց, պատարագիչ ժողովանի: Եւստայասց մեզ, որ նա, վախճանով եպիսկոպոսից, շատ կամեց ձայնով յիշեց միայն Թաւադայեանի անունը... Պատարագի վերջում տեղացի ակաւաւոր ազգեցիկ անձնաւորութիւններից մինը մտեցաւ: Անանիա եպիսկոպոսին ու խնդրեց, որ թոյլ տայ նա տեղական դպրոցների ուսուցչներից մէկին խօսելու Յաջորդը մերժեց, բայց ձայնով աղաղակելով՝ «Եկեղեցին ճառախօսների հանդիսարան չէ»:

Գորու գաւառի ԱնիԱՔԱՄԱՔ գիւղից գրում են. «Առաջիկայ յունիսի 22-ին, տեղիս հայ հասարակութեան հասկացող դասի ցանկութեամբ որոշված է տօնել այդ գիւղի ծխատէր Յովհաննէս աւագ քան: Տէր-Գայսեանցի քանահայտական գործունէութեան յիշատակելու Տօնը կազմակերպելու համար ընտրվել է չորս հոգուց բաղկացած մի անանաժողով:

ԿԱՆՁՈՒՄԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր հարեան Չանկի գիւղի բնակիչ Փաշօ Թորոսեան իր կնոյ և չորս տարեկան աղջկայ հետ գալիս է Ղարաւանդ, որ այնտեղից էլ գնաց «Վարդի-Հէր» ուխտ: Դժբախտաբար այդ օրը, բացի իրանցից, ուրիշ ուխտաւորներ չեն լինում: Համարձեման օրը, առաւօտեան կանուխ վեր կենալով, մարդ ու կին, իրանց ինամու որդու հետ ուղևորվում են դէպի սրբատեղիս: Այս վայրը գտնվում է Սուգաւէտ լեռնալիճի մի ձորերից մէկում: Վաշտում Վարոս Թաղոսի գերեզմանները համարելուց վերջ, ուղևոր են բարձրանալ վանքից մի քիչ հեռու, դէպի հիւսիս-արեւելք գտնված «Չարաբաղ» կոչված տեղը, ուր ճգնել են յիշեալ սրբերը: Ժողովուրդը հաւատում է թէ ճգնարանում արեւել արտառուրը մայելով քար, առաւ բանալով, անցել է քարափի սիրտը ու մի մեծ ջրով լի աւազան գոյացրել: Իւրաքանչիւր ուխտաւոր, մեծ թէ փոքր, «Վարդի-Հէր» ուխտ գնալիս, ճիգ է թափում, որ կարողանայ մի կերպ «Չարաբաղ» բարձրանալով, իջնել հակառակ կողմից սրբերի արտառուրից կազմված աւազանի վրա, լուսնալ աչքերը, և մի քիչ էլ աւազանի ջրից վեր առնել տուն բերելու համար: Մոլեռանդ Փաշոն, կնոջը և երեխային թողնելով սարի տակ, ինքը և ընկերը բարձրանում են «Չարաբաղ»-ի վրա: Դեռ աւազանին չը հասած, երկու ջրակը (որոնք հոսանակաւորներն են քանի վերաւոր տեղ հետեւել են թշուառ ուխտաւորներին) չոր հրեշ-

տնջով չեն նպաստել, միայն հայերն ունին պատմական արտադրից, որ ամփոփված է հայերի հին պատմագրութեան մէջ: Այդ աւանդութիւնը միայն մոնոպոլատ և առաւաղական տեղեկութիւններ է տալիս հնդկադերմահայ հայերի մասին, որոնք աւելի ուշ են գաղթել իրանց երկրորդ հայրենիք Հայաստան:

Բայց ինչպէս երևում է, Կենի վաղ ժամանակներում Հայաստանում մի ակն անկախ տէրութիւն էլ գոյութիւն ունէր, որ ոչ մի առնչչութիւն չուէր հնդկադերմահայ հայերի տէրութեան հետ և հին դարի պատմութեան մէջ երկար ժամանակ անյայտ էր: Գիւնի համար սարանի գիտական Շուլքը Վանի միջնաբերդում 40 տարեկանը դառն մի բոլորովին անծանօթ լեզուով գրված արձանագրութիւն ներկայ Անգլիայի արեւելագետներին մի քանի տարի անցնելուց յետոյ յաջողեց կարգալ Շուլքի գտած արձանագրութիւնները, որոնց պատճէնը վերցնելու ժամանակ գիտնականը սպանվել էր քրդերից: Թանից դուրս եկաւ, որ 900—600 թ. (թ. ծ. ա.) Վանում և նրա շրջապատում մի ժողովուրդ էր ապրում, որ բոլորովին ազգակից չէր հնդկադերմահայ հայերի հետ և մի քանի պատերազմներից յետոյ ասորեստանից նուաճվել էր: Մինչև անգամ վերոյիշեալ ժողովուրդի անունը պատմագրութեան հաստատ յայտնի չէր:

(Կը շարունակվի)

տակի նման, մէկը սարի գլխից, զինված, իսկ միւրը տակից, անգէն, ձայն են տալիս թեմափրանման գետաւորար սեզի կախարհաւ ինքն հայերը սաստիկ վախում են: Քրդերը երկար դրանց չարարելուց յետոյ, չեն կարողանում, ոչ մէկին և ոչ միւսին շնորհակալ ելնալով մի կերպ կարողանում են ազատուիլ նրանց ձեռքից: Մէկը փախչում է դէպի Ղարա-վանք, իսկ միւրը դէպի վանքի ձորը, վանքին մօտ սահմանապահ զօրքի պահականո-թի զինուորներին օգնութեան կանչելու: Քրդ-երը, տեսնելով տղամարդկանց փախուստը, յոյսներ կտրած, վայրենաբար յարձակում են քարի տակ փայտացած անպաշտպան կնոջ վրայ: Անտառի մերկացումն են կնոջը, բոլորովին ուշադրութեան չը դարձնելով մօր գրկում եղած փոքրիկ երեխայի լաց ու ձիչին, իրանց գազանային կրքերին յագուրդ տալով, հաւաքում են բոլոր ունեցած շորերը և ապա նստելով գիւղացու հալալ աշխատանքով ձեռք բերած, 100 ռուբլի արժեքող մատակ նոսրի վրայ, (շտապում են բարձրանալ դիմացի բարձր սարը, Մամուրը), որտեղից մի քանի րօպէսում հասնում են թիւրքաց սահմանը: Ինքն գիւղա-ցիները գրկվելով պատուից, գրկվելով իրանց միակ ձիւնը, յուսահատված գալիս են Կաղ-զուան՝ կառավարութեան իմաց տալու: Զը նայելով տեղիս առաջապահի ձեռք տառն խառն միջոցին, զորքերը չեն բռնվում: Ղա-րավանքիցների պատմելով, այդ դէպքից մի օր առաջ չարագործ զորքերը եղել են Գոմը զորական գիւղում և Գոմը թէ ամենուէր բէկը և թէ բնակիչ զորքերը տեղեկ են այդ գործին, բայց և այնպէս ամեն ինչ, չնորհի մի որ և է բէկի կամ զադիի, մինդար արթի է լինում թուրքի ու զորքի մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐՔԻԱՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

IV

Միջ Օրբենովիչը ամենայն իրաւամբ սեր-բիական ազատութեան երկրորդ նախահայրն է համարվում: Կարագէօրգիցի յետոյ, նա էլ գիւղացու գաւակ էր՝ չքաւորութեան ու զըր-կանքների մէջ մեծացած: Նրա մայրը՝ Վիշնեան ամուսնացած էր Օր-բէն անունով մի գիւղացու հետ, որից և ու-նեցաւ մի որդի՝ Միլան անունով: Ամուսնու մահից յետոյ նա նորից ամուսնացաւ՝ Տեչօ ա-նունով գիւղացու հետ: Անա այդ ամուսնու-թեանից ծնաւ Միլանը (1780 թ.): Դեռ մանուկ հասակից Միլանը ծառայում էր հարուստ գիւղացիների մօտ, իբրև հասարակ մշակ: Վերջում նա նայնպիսի մշակութեան մտաւ իր խորթ եղբայր Միլան Օրբենովիչի մօտ, որը ապրում էր Բրուսնիցայում և բա-ւական հարստութիւն էր հաւաքել: Երկու խորթ եղբայրներն այնքան սիրով էին, այն-քան մտերիւն, որ ժողովուրդը նրանց երկու-սին էլ հարազատ եղբայրներ էր համարում և Օրբենովիչներն անուանում Այդպէս էլ Միլանի ազգանունը մինչև վերջը մնաց Օրբենովիչ, փոխանակ Տեչօվիչի: Երբ հնչեց սերբական ազատամարտի միջոցը (1804 թ.), երբ ժողովուրդը ոտքի կանգ-նեց իր կենքը, գոյն ու պատիւը պաշտպա-նելու համար, Միլան և Միլան Օրբենովիչներն արդէն հարուստ ու նշանաւոր մարդիկ էին դարձել: Նրանք յետ չը մնացին ընդհանուր հոտանքից և մտան ազատամարտի առաջաւոր շարքերի իսկ այդ հոտանքը տարեցտարի ա-ւելի բարձրացրեց, աւելի նշանաւոր դարձրեց Օրբենովիչ անունը: Իր քաղութեամբ յայտնի էր Միլան Օրբեն-ովիչը, որին վիճակված էր ապագայում շատ մեծ դեր խաղալու: Սերբիայի համար, նա դեռ Կարագէօրգիի գործունէութեան ընթացքում բաւական հոշակ էր վայելում իբրև ժողովուր-դական հերոս, իսկ երբ գաղաբեց այդ գոր-ծունէութիւնը, երբ 1813 թ. պարտութիւնից յետոյ Աստագէօրգիի ընկերների հետ փա-խուստ արեցին, այն ժամանակ աւելի օստո-կացաւ ժողովուրդի սէրը դէպի Միլանը: Եւ ի-զուր չէր այդ սէրը: Միլան Օրբենովիչը գրեթէ միակն էր ապստամբութեան ղեկավարներից, որ պարտութեան ու յուսահատութեան տա-րիներում էլ չը հեռացաւ հայրենի երկրից, մնաց հարազատ ժողովուրդի շրջանում: Ինչպէս պէտք է անեք Աստագէօրգիում, առաջ նա փախուստ առաջարկող ընկերներին, մեր այնտեղ եղած ժամանակը թշնամին կը տանէ մեր կանանց, կը սպանէ մեր երեխաներն ու ծնողներին: Ո՛հ, չը պէտք է փախչել ընդհա-նուր թշուառութիւնից...

Եւ նա չը փախաւ: Նա մնաց Սերբիայում իբրև մի յենակէտ ընկճված ու յուսահատված ժողովուրդի համար: 1813—1815 թվականները դառնութեան ծանր տարիներ էին սերբերի համար: Թիւր-քիան օգտուեց այդ ժամանակ տեղի ունեցող եւրօպական խռով գէպքերից և ամենախիստ միջոցներով ճնշեց սերբական ապստամբու-թեան հետքերը, քրիստոնեաների արեւնով ներկեց բազմաթիւ գիւղեր ու քաղաքներ և ապա հաշտութիւն կայացրեց իր զմտու-րայաներին հետ, նրանց թողնելով մի քանի աննշան իրաւունքներ ներքին գործերի վերա-բերմամբ: Նորից սկսվեց ճնշում ու հալածանք: Նորից բռնութիւնը հասաւ իր գագաթնակէտին: Դեռ չէր ցամաքել թափված արիւնը, բայց սերբ ժողովուրդը կարծեւ նոր արիւն էր պահանջ-վում, նոր կուէր էր պարտատուութեան Այս ան-գամ նա իր հայեացքն ուղղել էր Միլան Օրբե-նովիչի վրայ և նրանից էր փրկութիւն օպա-ստում: Բայց Միլանը չէր յտապում, աչքի առաջ ունենալով քաղաքական խաւար միջոցը յուսա-նքի երակային, երբ ռուսաց յաղթական զօրքը հասաւ Ֆրանսիայի սահմաններ և վերջնակա-նապէս ճնշեց թիւրքիայի դաշնակից համար-վող Նապօլէոնին, այն ժամանակ Միլան Օրբե-նովիչը արձագանք տուեց ժողովուրդական պա-հանջին և պարզեց երկրորդ ապստամբութեան դրօշակը (1815 թ.): Նորից սկսվեց անհաւասար կռիւ: Թիւրք-կառավարութիւնը մի անգ զօրութիւն հանեց ապստամբների դէմ—բազմաթիւ զօրք ու թըն-դանօթներ: Այդպիսի կտրուկ միջոցը յուսա-հատեցրեց սերբերին: Նրանցից շատերն առա-ջարկում էին հաշտվել թիւրքերի հետ և խա-ղաղվել, բայց կային և այնպիսիները, որոնք բացառապէս էին: —Աւելի լաւ է սեփական ձեռքով օպանեք մեր կանանց ու երեխաներին, իսկ ինքներս բարձրանանք լեռներ և մինչև մահ կռվենք թիւրքերի հետ... Անա այդպիսի տարտամ գրութեան ժամա-նակ ցնդեցիկ սերբերին օգնութեան հասան մի քանի հարիւր զինված չեքսօզորցիներ և նորից վառեցին հանգած օգնութիւնը: Ապա-տամները մի քանի արիւնահեղ ընդհարում-ներից յետոյ գրաւեցին բազմաթիւ գիւղեր, քաղաքներ և հասան նոյն իսկ մինչև Բէլգրադ: Ե. Բ. ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՍՏԱՆԻՑ

Թուրքի, մայիսի 22-ին Մենք էլ հանդիսանաւ եղանք շարժումներ: Պարսկաստանի քրիստոնեան, որ երբեք չէր մոռացել հրաբուխ բերանին մօտ լինելը չնորհի մահմէդական ամբողջ մղոնաւորութեան, այս անգամ ակնառտեալ է այդ հրաբուխի ցնցում-ներին և որոտին և սարսափով օպանակ է նրա հետեւանքներին: Քրդերն արդէն յարձակվել են Ուրմիայի գաւառի Մաւանա կոչված մասի ասորի գիւղերի վրայ: Կողովուրդ են ունեցած-ները, բնաբարել կանանց և աղջիկներին և ապա կրակ տուել գիւղերը՝ այրելով քանի-երկու մարդու: Խոտովութիւն կայ Ուրմիայում, Սուլա Բուլղազում, Արաբաբիւում և Ռաշադում, խոտովութիւնը սկսվեց և Թաւրիզում և մենք ակնառտեալ ենք մօտեցող փոթորիկի բոլոր նը-շաններին: Երէկ քաղաքի թալաւանների (տիրացուների կամ մէջքների ռեստորանների) գործարար թա-լանեցին չորս հայ խանութներ, ոչնչացնելով միջի բոլոր ապրանքը և տէրերին ծեծելով տա-րան մուշտէյիդի մօտ: Դրանցից երեք հոգի փախել են, իսկ չորրորդը դեռ այնտեղ է և չը գիտեք կենդանի կամ մեռած լինել: Եւրօպական զինուորները գլխաւորապէս ուղղված են քրիս-տոնեաների դէմ և ունեն հետեւեալ նպատակ-ները: 1) Ոչնչացնել նոր մտցած մաքսային սակաւքները (տարիքը): 2) Արգելք դնել երկա-թուղու չինութեան և հեռացնել ճարտա-րապետներին: 3) Պետական ծառայութեան մէջ չնշանակել ոչ մի քրիստոնեային: 4) Փակել պարսկական այն բոլոր դպրոցները, որոնց մէջ աւանդվում են եւրօպական լեզու-ներ: 5) Մինչև ժամի 12-ը հեռացնել քաղաքից մաքսատան վերաւտեստը բեղիկացի Պրիմին: 6) Քաղաքում և արգելել մահմէդականներին մուտքն այնտեղ: Անա այն պահանջները, որոնք դրված են տիրացու ռեստորանների կողմից այստեղի հիւժկած և թոյլ կառավարութեան առաջ: Թող ուրիշ երկրները գոռան լուսաւորութեան, մաք-րաւորութեան և հնչա երթնեւորութեան մասին,

թող տքնեն ու աշխատեն—որքան իրանց լեզուն է, մուշտէյիդի իրան թալաւաններով այլ ճանապարհ ունի Պարսկաստանի լուսաւորու-թեան համար և անուանական գոյութիւն ու-նեցող կառավարութեան թեւադրում է իր խաւատուն գլխի մարդարիտները, օգտուելով ինքն և կոյր ժողովուրդի՝ ամբողջ տրամադրու-թեանից: Ժողովուրդն այս րօպէսա հաւաքված է մէջքներում և լուս է կոյր, մոլեռանդ մօ-լանների քարոզը, որին զոհ կարող է գնալ հարիւրաւոր անմեղների գոյնը ու կենքը: Ռուսաց հիւպատոսը գնացած է ամարանոց—Մամուրա գիւղը, որը միացած է քաղաքի հետ հեռախօսով: Ամբոյն առաջուց կտրել է հեռախօսի թելերը, որպէս զի ամեն տեսակ հաղորդակցութիւն խանգարած լինի Պետրը, բանկերը, մաքսատունը, ամբողջ քաղաքը և նոյն իսկ հաղապահների խանութները փակ են: Կառավարութիւնը սարսափած ընկճեց ամբողջ, աւելի շատ՝ թալաւանների պահանջ-ների դիմաց և կնքեց իր ունեցած չորս փոք-ր շատէ կանոնաւոր և միակ դպրոցների դըռ-ները, խմիչեղէնի խանութները, մաքսատան և պօստատան վերաւտեստի անմիջապէս հեռա-ցրեց քաղաքից դէպի Ջուլֆա, իսկ միւս խնդի-րների համար դեռ կարողացել է միմիայն խոս-տուններ տալ: Ժողովուրդը դեռ խաղաղված չէ: Թէ ինչ աստիճանի կարող է հասնել կառավարութեան դէմ յաղթանակող կոյր հոգնորակութիւնն ու առաւել կոյր ամբողջ, այդ ցոյց կը տայ մօ-տիկ ապագան: Բայց մարգարէ չը պէտք է լինել գուշակելու համար, որ մի օր և էլ լաւ բանի սպասելը աւելի քան միամտութիւն կը լինի, որովհետեւ միանգամ ստանալուն սովորեցրածը միշտ կը պահանջէ, իսկ պարսիկ ամբողջ բացի թալանից ու արիւնից, ուրիշ բան հասկանալ չէ կարող և չէ էլ ցանկանում: Տեսնեք հետեւները:

Իրանցի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Matin» լրագրի թղթակիցը, որ ուղարկ-ված էր խաղաղութեան կողմից Բալկանեան թերակղզին, Սօֆիայում խօսակցութիւն է ու-նեցել գեներալ Տոնչիկի հետ, որ, ինչպէս յայտնի է մակեդոնական շարժման պարա-զլուներին մէկն է: Խօսակցութեան ժամա-նակ Տոնչիկ խիստ լեզուով դատապարտեց Սա-լոնիկում տեղի ունեցած սարսափների հեղի-նակներին և դրականապէս յայտնեց, որ դա մակեդոնական ներքին կազմակերպութեան գործը չէր, որին աւելի են տերորիստական բոլոր բռնութիւնները, այլ մի քանի մարդա-սպանների գործն է, որոնք ամենին կապ չու-նեն մակեդոնական կօմիտէաների հետ: Մակե-դոնական շարժման մասին գեներալ Տոնչիկ յայտնեց հետեւեալը: «Մակեդոնական գործիչ-ները, որոնք գործի գլուխ են կանգնած, մի-այն մի ցանկութիւն ունեն, այդ այն է, որ ի-րագործվի Բերլինի 25-րորդը՝ մինչև այժմ չի-րագործված յօդուածը: Մեր նպատակն է տալ թիւրքիայի քրիստոնեաներին գոյութեան փոք-ր շատէ ցանկալի պայմաններ: Մենք կամե-նում ենք, որ չը լինեն ոչ աւերի, ոչ սարուկ-ներ: Թող բաւարարութիւն տան մեր պահանջ-ներին, և մենք ուրախութեամբ կը ճանաչենք սուլթանի գերիշխանութիւնը: Մենք կարծում ենք, որ ինքն Սուլթանը անկեղծօրէն ցանկա-նայ՝ կարող է իրագործել մեր ցանկութիւննե-րը: Միայն այս միջոցով կարելի է խաղա-պացնել մակեդոնական ազգաբնակչութիւնը և մակեդոնական շարժումը: Մակեդոնական բա-ժանելու ծրագիրը բոլոր ծրագրիներից աւելի վտանգաւորն է: Մակեդոնիան պէտք է մնալ անբաժան և ստանալ ինքնավարութիւն: Մա-կեդոնացիների նշանաբանը պէտք է լինի՝ «Մակեդոնիան մակեդոնացիների համար: Ինչ վերաբերում է Սուլթանի անցքերին, նորից կրկնում ենք—աւելացրեց գեներալը—նրանք երբեք չեն մտել կօմիտէաների ծրագրի մէջ և նրանց պատասխանատուութիւնը չը պէտք է ծանրանայ կօմիտէաների վրայ: Մեր գործը բոլորովին արդար գործ է, և մենք դեռ ևս յոյս ենք տածում, որ Եւրօպան կօչնէ մեզ ա-նջողութիւն գտնելու: —St. Pet. Her.» լրագրին գրում են Բեր-լինից, որ Գերմանիայում փոքր առ փոքր ա-նջողութիւն է գտնում բուլղարականութիւնը: Գործունէութեան առանձին եռանդ այս գոր-ծում ցոյց է տալիս Բերլինի թէոսօփիական ընկերութիւնը: Նա գնել է արդէն սեփական տուն, կազմել է հարուստ գրադարան, իւրա-քանիւր շաբաթ, կանոնաւոր կերպով, ընկե-րութիւնը նիստեր է ունենում: Գերմանիայի բազմաթիւ քաղաքներում այդ ընկերութիւնը բացել է բաժանմունքներ: Ֆալկ քահանայի ասելով, որ այդ ընկերութեան գործունէու-թեան նուիրել է մի ամբողջ բնակարան, թէոսօ-փիայի և բուլղարականութեան մէջ սերտ կապ կայ: «Թէոսօփիան»,—ասում է Ֆալկ,—գուտ բուլղարականութիւն է: Բուլղարականութե-թիւնը մեծ ազդեցութիւն է գործել գերմանա-կան փիլիսոփաների վրա՝ սկսած Շօպենհաու-րից մինչև Նիցշէ: Հարուստ և Նիցշէ իրանց

փիլիսոփայական սխառնները հիմնել են բուլղ-րականութեան հիմունքները վրա: Բուլղա-րական վարդապետութիւնը մեծ ազդեցութիւն է գործել նոյն իսկ հանճարեղ Ռիխարդ Վագ-ների վրա, որ իր մի քանի օպերաներում յայտնում է զուտ բուլղարական հայեացքներ: «ՄԵՍԿԻ» ՀՅՈՍԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱՅԱԼՈՒԹԻՒՆՈՑ

3 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Յունիսի 3-ին Նորին Մեծու-թիւն Ալեքսանդրիայի ամառանոցում: Պետեր-հօֆում տեղի ունեցաւ: Նորին Մեծութեան անձնական պահակախմբի կօչակների ներկա-ցումը:

ՎԻՆՆԵՆԱ. Այստեղի քաղաքական շրջանների հաւանական կարծիքով կոմս Լըին Չակին կը յանձնարարվի վեներական նոր միմտարու-թիւն կազմելը:

ՏԵՏԻՆԻ. Այսօր Թիւրքիա վերադարձրին Միլիտարայի ընակիցներին, որոնք քանդել էին թիւրքական օսմանի բրօկիտուզը և փախել էին Չերնօգորիտ:

ԲԵՂԳՐԱՎ. Ասում են, որ գտնված են Ա-լեքսանդր թագաւորի սեփական ձեռքով կաղ-մած նախագիծը, որոնց համեմատ յունիսի 16-ին գահաժառանգ պէտք է հրատարակվէր Նիկօլիմ Լուսնիկը և մի և նոյն ժամանակ ուսեղադրած պահպանութեան գրութիւն պէտք է մտնէր: Դրա հիման վրա մահվան պէտք է դատապարտվէին շատ անձնք, որոնց թուում և Ավիվալուսնիկը, Շիմօլիկը և Նիլի զորա-պետ Սանկովիչը:

ԲԵՂԳՐԱՎ. Քաղաքը իսկական տոնական կեր-պարանք չունէ: Դա ամենից լաւ է բնորոշում այն փաստը, որ ազգաբնակչութեան մեծամաս-նութիւնը բոլորովին չէ մասնակցում կատար-ված գէպքերին:

Կ. ՊՈԼԻՍ. Նիլիկ-Քեօսկում բաւական հան-գատացան, երբ Պետերբուրգի և Վիեննայի կաբինէտներից տեղեկութիւն ստացան դէպի սերբական գէպքերը վերաբերվելու մասին:

ՏԵՏԻՆԻ. Իշխանը, իշխանական ընտանիքը և ժողովուրդը մեծ օգնութեամբ՝ զան-գահարութեամբ և թնայնութեամբ ընդունեցին նորնոր Պետր Կարագէօր-գիի յայտագրերը, որ նրանց հաղորդեց Սերբիայի դեսպան Վասիլը: Նուազախմբերը ման են զալիս փողոցներում: Քաղաքը զար-դարված է դրօշակներով, երեկոյան հրավա-ռութիւն կար: Իշխանը զիմեց ժողովուրդի մի ճառով որով փառաբանեց նոր թագաւորի պապի քաղութիւնն ու բարեմասնութիւնները և մի և նոյն ժամանակ դատապարտեց Բէլ-գրադի արեւանի գէպքերը:

ՆԻՒ-ՅՈՐԳ. Օրեգոն նահանգի Տեններ քա-ղաքը աւերվեց սարսափելի հեղեղից: 300—500 հոգի խեղդվեցին:

ԼՈՒՐԵՐ. Լոնդոնում և հարաւային Անգլիա-յում 25 ժամ անընդհատ թափվող անձրեւ հե-ղեղեց անաղին տարածութիւն, ամառանքը Տեմպայի հովտում: Փողոցները և տները ջրի մէջն են: Խոտի հուճը ոչնչացած է: Երկաթու-ղային կանոնաւոր հաղորդակցութիւն ընդհատ-ված է:

ՌՈՒՐԱՊԵՏ. Պատգամաւորների ժողով. մի-նիստը նախապէս Սելը յայտնեց, որ կայան ընդունել է միմտարութեան հրատարակումը, ուստի նա խնդրում է փակել նիստը մինչև նոր միմտարութիւն կազմելը: Առաջարկու-թիւն ընդունված է, նիստը փակված:

ԲԵՂԼԻՆ. Ժամանեց Մեծ Իշխան Վաղդիմիր Ալեքսանդրովիչը:

4 յունիսի

ԲԵՂԼԻՆ. Չերնօգորիայի իշխան Նիկօլայը ուղարկեց Պետր թագաւորին մի չնորհաւո-րական հետագիր, որով յոյս է յայտնում, թէ ծանր ժամանակներն անցան սերբ ժողովուրդի համար և բոլոր սերբերին մի գեղեցիկ ապա-գայ է ապստում Ագրիտոնիկը մինչև Դունայ գետը: Այժմից հաստատվում են Սերբիայի և Չերնօգորիայի միջև անկեղծ բարեկամութիւն ու եղբայրութիւն: Ամբողջ սերբ ժողովուրդը օրհնում է Պետր թագաւորի իշխան Նիկօլայի փեսայի և թանկագին եղբոր դա՛ բարձրանալը:

ԲԵՂԼԻՆ. Պատգամաւորութիւնը միայն յունիսի 5-ին ճանապարհ կընկնէ: Յունիսի 3-ի երեկոյան ժընեղ գնացին ագրիտաւոր և երկու օֆիցերներ:

ՊԵՏ. Կայսրը յանձնարարեց կոմս Ստեֆան Տիւսին միմտարութիւն կազմել:

ԲԵՂԼԻՆ. Ազգային ժողովի չնորհաւորական հետագիրն Պետր թագաւորը հեռագրով պա-տասխանեց Վիլիմօլիկին, որ միշտ չնորա-կալ կը լինի ազգային ժողովից և խոտանում

է միտ ազգային ազատութեան ներկայացուցիչն ու ազգային ժողովի անդամակցական իրաւունքները ամենահաւատարմի պաշտպանը լինելը Արիւմանդիւնի հետագիւր թաղաւորի անունով հետեւալ բովանդակութիւնն ունէր. —«Ազգային ներկայացուցչութիւնն ընտրեց ձեզ Սերբիայի թաղաւոր Կառավարութիւնը, յայտնելով ձեզ այդ մասին, պատիւ ունի յայտնելու իր սրտագին շնորհաւորութիւններն ու ցանկութիւնները, որպէս զի մեր հայրենիքը Սերբիայի ազատարար և փառապանծ Կարապէտի 1-ի թոռի կառավարութեան ժամանակ ազգային փառքի ճանապարհով առաջ ընթացաւ: Անհատի և սկոպչիկայի հետագիւր հետեւեալն էր. «Սերբիայի ներկայացուցչութիւնը ազգային ժողովը միահամուռ ոգևորութեամբ ընտրեց ձեզ Սերբիայի ժողովական թաղաւոր: Նախագահական թիւըսն պատիւ ունի ձեզինք խնդրելու՝ ընդունել ջերմագին ու ցընծագին շնորհաւորութիւններն:»

ԲՈՒՆԱՐԵՍ: Թաղաւորը հրաժարեց սերբիական 6-րդ հետեւալ գնդի շէֆի կոչումից: **ՆԻՒՆՈՐԿ:** Տեսնելու քաղաքի երեք ջառորդը քանդակած է: Չոհն քանդակ 300 հոգի: **Կ. ՊՈԼԻՍ:** Վերջին 14 օրերի ընթացքում Սօսաւորի վիլայէթում շատ ընդհարումներ են տեղի ունեցել, եղել են սպանութիւններ և վիրաւորվածներ: Տեղեկութիւններ են ստացվում կոմիտէի անդամներին և անդամներին Սոսաւորի վիլայէթի տեղեկութիւն է ստացվել երեք ընդհարումների մասին: **ՍՕՏԻԱ:** Կարապէտի վիլայէթի միաձայն ընտրութիւնը հիմնալի ազատութիւն է թողնում: Գաղթականների մեծ թաղմութիւն է վերադառնում Բելգրադ:

ԽՈՐԱՊԵՐ՝ ԱՆԴՐԱՆԻՐ ՔԱՆԱԹԱՐ
Հարգելի քան ինչն է՝ ԹԱՊԵՐԻՆԻ ՏԻՊՐԱՆԵԱՆ
ԻՊՈՒՆԻ ՄԵԼԻՒՆՆԱՐԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԿԻՆՈՎԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագումար թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.) հաւանում է Բաթում երեկոյեան 8 ժ. 3 ր. (9 ժ.):
Արագ գնացք Բաթումից Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 24 ր. (11 ժ. 22 ր.), հաւանում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 44 ր. (9 ժ. 42 ր.):
Պատասխան գնացք Բաթումից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 18 ր. (10 ժ. 16 ր.), հաւանում է Թիֆլիս ցերեկովայ 4 ժ. 25 ր. (5 ժ. 23 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 20 ր. (6 ժ. 18 ր.), հաւանում է Բաթում առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժամ 3 րոպէին):
Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս ցերեկովայ 1 ժ. 3 ր. (2 ժ. 1 ր.), հաւանում է Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 5 ր. (7 ժ. 3 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 6 ժ. 51 ր. (7 ժ. 49 ր.), հաւանում է Բաթում երեկոյեան 6 ժ. 58 ր. (7 ժ. 56 ր.):
Պատասխան գնացք Բաթումից դուրս է գալիս ցերեկովայ 9 ժ. 23 ր. (10 ժ. 21 ր.), հաւանում է Թիֆլիս ցերեկովայ 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկովայ 10 ժ. 51 ր. (11 ժ. 49 ր.), հաւանում է Բաթում առաւօտեան 5 ժ. 8 ր. (6 ժ. 6 ր.):
Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 9 ժ. 39 ր. (10 ժ. 37 ր.), հաւանում է Թիֆլիս երեկոյեան 10 ժ. 3 ր. (11 ժ. 1 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 10 ժ. 34 ր. (11 ժ. 32 ր.), հաւանում է Բաթում ցերեկովայ 3 ժ. 2 ր. (4 ժ.):
Պատասխան գնացք դուրս է գալիս Թիֆլիսից գէպի Երևան երեկոյեան 11 ժ. 32 ր. (12 ժ. 30 ր.), հաւանում է Երևան 5 ժ. 14 ր. (6 ժ. 12 ր.), հաւանում է Կարս 2 ժ. (2 ժ. 58 ր.):
Պատասխան գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկովայ 3 ժ. 57 ր. (4 ժ. 55 ր.), հաւանում է Ալեքսանդրապոլ երեկոյեան 7 ժ. (7 ժ. 58 ր.), Երևանից դուրս է գալիս 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), հաւանում է Թիֆլիս առաւօտեան 5 ժ. 11 ր. (6 ժ. 9 րոպէին):

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՆԱԹԱՐՈՒՆՆԱՐԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Երկրորդ 1903 թ. յունիսի 10-ին, ցերեկովայ ժամը 12-ին, նշանակված է առաւօտը՝ կապալով տարու երեք բուսական յայտարարութիւնների համար, որ յարմարեցրած է նաև առևտուրի համար:

Ցանկացողները կարող են պայմանները տեսնել բոլոր ատենական օրերում, առաւօտեան ժամը 9-ից մինչև 2-ը, վարչութեան չորրորդ բաժանմունքում:

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2

2—3

4—10

68—105

4. հ.)

1—2